

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐՑԱՒԻՆՔԻ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 169

17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՒԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՏՕՂԱՍՑՈՅՑ

Հոկտ.	18 †	Կիր. զկ.	Զ. Զկնի խաչին:
	19	Բշ. ղա.	Սրբոյն Յովսեփայ Աստուածահօրն:
	20	Գշ. ղկ.	Ս. Ղուկիանոսի հայրապետին եւ Յովսեփայ Արեմաթացւոյն եւ բարեկամին Քրիստոսի Ղազարու եւ եղբց նորա Մարթայի եւ Մարիամու:
	21	Դշ. ամ.	Պահոց:
	22	Եշ. ամկ.	Ս. Թեոդորիտոնի քահանային եւ Զենոնի զինաւորին եւ Մակարայ Եդեսիոսի եւ Ռոմելայ: Եւ սրբոց խարիբեանց 10200 մարտիրոսաց եւ Արտեմեայ վկային:
	23	Ուր. բա.	Պահոց:
	24	Շբ. բկ.	Ս. Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային: Եւ Ս. Անաստասայ քահանային եւ Վարոսի եւ Թեոդիտեայ եւ որդւոց նորա եւ որոց ընդ նոսա կատարեցան:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ

ԾԱՌԱԹԱԹԵՐԹ

Չորրորդ տարի ✠ 17 Հոկտեմբեր 1914 ✠ Թիւ 169

«Սրբազան Բահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ **Կաթողիկէ Արձագանգ** շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարդ. Մէրի տէր Վլպի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԴ. Թերգեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1913, թիւ 60780 թուականաւոր:

ԴԼԻՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱԼԷՊԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ԱՌՔԻՒ

Դ.

Պէտք է հանառօտիւ խորհրդածել թէ ի՞նչ բանի վրայ կայացած է ճըշմարտապէս կաթողիկէ դաստիարակութիւնը:

Դաստիարակութիւնը, ինչպէս ծանօթ է զայն ուսումնասիրողներուն, ամենանուրբ արուեստ մըն է և միանգամայն խիստ տրամաբանական գիտութիւն մը, որուն էութիւնը կը կազմէ մարդկեղէն հոգեբանութիւնը: Մարդ արարածը, որ կազմուած է հոգիէ ու մարմինէ, իր հոգեկան կարողութիւններուն կատարելագործելի ըլլալուն, իր մարմնոյն ապիկարութեան, իր ընկերական յարմարութեանը կերպաւորման պատճառաւ, և մանաւանդ սկզբնական անկումին՝ ասոնց ամէնուն մէջ գործած ահաւոր աւերն ի նկատի առնելով, պէտք ունի վարպետ, փորձառու, գրեթէ գերմարդկային ձեռքի մը, որ այս ամէն չարիքը ի բաց վանէ, որ այս ամէն բարիքը անվրէպ և վճռաբար կատարելագործէ, որ՝ միով բանիւ, վերակազմէ մարդը, որով կարենայ ըսուիլ՝ Այս է

մարդն ամենուին։ Ահաւասիկ դաստիարակութեան վախճանը։ Թէ ո՛րքան բարձր, վեմ և կարեւոր է այդ վախճանը, հարկ չկայ ապացուցանելու։ զի մարդկային ընկերութեան երջանկութիւնը անկէ կախում ունի։

Երբ այս վախճանը նկատենք աւելի բարձր և գերբնական, երբ իմացինք որ դաստիարակութիւնը կը ծառայէ նաև ուղղելու զմարդ իր վերջին վախճանին, որ է Աստուած, կը կրթէ և կը վերակազմէ զմարդ ճշմարիտ կրօնից անմոլար ծանօթութեան մէջ, ամէն բնական ու գերմարդկային լաւութիւններով և առաւելութիւններով, և զայն ոչ միայն կ'երջանկացնէ բարոյապէս հոս, այլ և յաւիտենապէս ի հանդերձելումն, ահա ա՛ն ատեն կ'ունենանք ճշմարիտ կաթողիկէ դաստիարակութիւն։

Արդ Կաթողիկէ Դաստիարակութիւնը, իր այս վախճաններուն հասնելու համար ձեռք կ'առնու մանուկը, մասնաւոր հասակին մէջ և կ'առաջնորդէ անոր՝ պատանեկութենէ մինչեւ երիտասարդութիւն, ի գործ դնելով անոր հոգւոյն վրայ իր երկնապարգեւ ազդեցութիւնը, ինչպէս որ պարտիզպան մը իր բուսաբանական արուեստին ամէն փափկութիւնները ի գործ կը դնէ, մինչեւ որ մասնաշ տունկը դադրի վայրենութենէ՝ աղնիւ պատուաստով և վերջապէս աճի, ուռճանայ և ծառ ըլլայ քաղցրահամ պտղատու։

Ամենէն դիւաւորն ու ամենէն դժուարինը՝ հոգւոյն կրթութիւնն է։ Եւ դժբախտաբար ամենէն նուազ ուշադրութիւնը անոր վրայ կը դարձուի. և ա՜ւ՜ղ, շատ անգամ ապականութեան սերմեր կը ցանուին անոր մէջ, որ կոյս հողի կը նմանի։ Նոյնպէս Արիստոտէլ նմանցուցած է հոգին՝ թուղթի մը որուն վրայ բան մը գրուած չէ։ Արդ, այս կոյս հողը կ'ընդունի՝ ինչ որ ցանուի անոր մէջ, այդ ճերմակ թուղթը կ'ընդունի՝ ինչ որ գրուի անոր վրայ։ Ժամանակի կարօտ և յոյժ տաժանելի արուեստ՝ դաստիարակինը. բայց կարեւոր և լի վարձուք։

Տեսէ՛ք, ո՛րքան կը ճգնի կը տուայտի քանդակագործը, մինչեւ որ մարմարի կոշտ մէկ կտորը դարձնէ գրեթէ խօսուն մարդկային տիպար մը. ո՛րքան կ'աշխատի և կը հսկէ նկարիչ մը, մինչեւ որ անկերպարան լաթի մը վրայ պատկերացնէ գրեթէ շնչող հիանալի դէմքեր ու տեսարաններ։ Բայց աւելի՛ տաժանելի է մոզաիգ շինողին գործը. հազարաւոր գոյներով դանդաղ դանդաղ պիտի ճգնի պատկեր մը յօրինել, տարիներու աշխատութեամբ։ „Աղնիւ պատկեր մը՝ մէկ մեթր քառակուսի, քանի տարի աշխատութիւն կը պահանջէ՞", կ'ըսէր մեզ Վատիկանու Մոզաիգներու վերակացու արուեստագէտը։

Ո՜հ, մարդկային հոգին, ի՜նչ մոզաիգ. Աստուծոյ պատկերը. ի՜նչ կարողութիւններ, որպիսի՛ ընդունարան, ի՜նչ տեսակ երփներանգ զգացումներ, զարմանալի կրքեր, առաքինութիւններ, դիւցազնութիւններ. ո՛րքան վսեմ, գերբնական, երկնագեղ վերացումներ և հիացումներ։

Պէ՛տք է կրթել այս հոգին, կերպարանաւորել ու մարզել անոր մէն մի կարողութիւնները. մաքրել անոր թուփերն ու տատասկները, անկեալ բնու-

թեան չար միտութիւնները։ Պէտք է կրթել այդ միտքը, բանականութեան սաստուածատուր գործիքը, որ զմարդ հրեշակաց կը նմանցնէ. ուղղել և զանուացնել դատողութիւնը. չափաւորել և մաքրագործել երեւակայութիւնը։ Պէտք է կրթել կամքը, որ կը կառավարէ նոյն իսկ միտքը, բարեխառնել անոր բուռն փափաքները. ազնուացնել անոր սէրը և սովորութիւնները, կազմել անոր անդեւուն նկարագիրը։ Ան ատեն կատարեալ պիտի ըլլայ մարդը։

Էական է Հանրոզումը բնական ընել. բայց մանաւանդ Պարտուց համոզումը։

Պարտ առ Աստուած, երկրպագութիւն, սիրոյ, երկիւղի, մեծարանաց, ծառայութիւն, հնազանդութիւն և վարձուց ակնկալութիւն, որով և ճշմարիտ կրօնքի հպատակութիւն։

Պարտ առ ինքն, անձին կատարելութիւն, հոգեւոր և մարմնաւոր։

Վերջապէս Պարտ առ ընկերն, եղբայրսիրութիւն, արդարութիւն, ազգասիրութիւն, եւն.։

Այսպէս կատարեալ պիտի ըլլայ մարդը։

Ահա այս է դաստիարակութիւնը։

Ո՛րչափ սխալ է կարծել ուրեմն թէ Դաստիարակութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ քանի մը լեզու խօսիլ, քիչ մը գիտութիւններէն քիչ մըն ալ դպրութիւններէն ճաշակել, քիչ մըն ալ մարմնամարզ և ընկերական առնչութեանց մշակում. և ո՛րչափ մեծ ինաս է ասոնցմով միայն գոհանալ։ Իսկ ո՛րքան մահաբեր է գիտակցաբար մերժել վերի ըսուած էական կէտերը, և անոնց հակառակը գործել, անկրօնութեամբ, չարութեամբ և մեղկութեամբ անբարոյացնելով հոգին, և ապականելով սերունդները։

Հետեւաբար արդի ժամանակիս պիտոյիցը համաձայն կարեւոր եղող Կաթողիկէ դաստիարակութիւնը՝ այս ամէնը ենթադրելով և իմացական մասը զարգացնելով հանդերձ, բարոյականի և նկարագրի մասին ծնողաց տուած կրթութիւնը պիտի կատարելագործէ։ Ապաքէն առաջին կրթութիւնը ծնողաց պարտքն է, և ամենէն հիմնականն ալ այն է. կաթին հետ տղայոց սրտին և արեան մէջ կաթեցնել Կաթողիկէ սկզբունքները. այս է իրենց ամենասրբազան գործը, աս պէտք է ըլլայ իրենց գերազուարճ զբաղմունքը. մայրական ծնկերուն ու գրկաց վրայ տրուած դաստիարակութիւնը երբեք չի թարշամիր. առաջին բարի սերմերն են անոնք որ բնաւ չեն կորսուիր. դպրոցին դաստիարակութիւնը անոր շարունակութիւնն է միայն։ Անտիական տիոց մէջ է որ խորարմատ կը քանդակուի մանկական սրտին մէջ Գերագոյն Էակին ստեղծագործ և փրկիչ զօրութիւնը, գթառատ Մայրիկին հզօր պաշտպանութիւնը, Վերջինքը, Ս. Եկեղեցւոյ Խորհրդոց և Տեսանելի Գլխոյն վարդապետութեան սկզբունքները, մեղքէ սոսկում, աղօթք, Աստուծոյ սէր, համակամութիւն, պատուիրանաց յարգութիւն և հպատակութիւն, խոստացուած անվերջ երջանկութեան յոյսն, և կեանքի մէջ բարոյականի և առաքինութեանց հրամայողական պէտքը։ Ասոնք պիտի ընդլայնէ և ամրացնէ ապա դպրոցի դաստիարակութիւնը։ Մանաւանդ պիտի աշխատի ամէն առթի մէջ, համառօտակի, գրեթէ անզգա-

լապէս յեղյեղել զանոնք. ապա դասաւանդութեամբ ևս՝ զանոնք բանական և պատճառաբանական հիմերու վրայ հաստատել. մանաւանդ Կաթողիկէ Եկեղեցւոյ կազմակերպութեան աստուածայնութիւնը, անհամեմատ գեղեցկութիւնը, ազդայ վրայ փրկարար՝ ազդեցութիւնը, անոր հիանալի յաղթանակները՝ դարուց շրջանին մէջ. ընդհակառակն՝ մոլորութեանց ստութիւնը և գիսաները ցոյց պիտի տայ, և պիտի ապացուցանէ հետեւաբար՝ Ս. Եկեղեցւոյ հնազանդութեան պէտքը և երջանկութիւնը, և անոր արժանաւոր զաւակ ըլլալու պատիւը։

Դաստիարակը պիտի ճգնի այս ամէն վարդապետութիւնները մանաւանդ գործադրութեան վերածել՝ զգուշաւոր խոհեմութեամբ, հաւասարապէս խորշելով տաղտկացուցիչ չափազանցութենէ՝ որ վերջը բոլորովին կը պաղեցնէ, և ստորնացուցիչ կեղծաւորութենէ։ Քաջ, համոզուած, հաստատամիտ, անվեհեր, ուշիմ և կրթեալ Կաթողիկէ պատանիներ պիտի հանին այսպէս. փրկութիւն ընկերութեան, դանձ՝ ազգի և հասարակութեան, յոյս և ցնծութիւն նաև Ս. Եկեղեցւոյ. այս պիտի ըլլայ ամենամեծ ծառայութիւն Աստուծոյ և մարդկութեան։

Այս տեսակ դաստիարակութիւն մը չենք կրնար հոս աւելի մանրամասնել. իւրաքանչիւր մարդիկը՝ ըստ իւր կոչման և դիտութեան, և ըստ հանդամանաց անձերու, բիւր զանազանութեամբ պիտի յարմարցնէ սկզբունքները։ Ասով կը յաջողին Եւրոպիոյ կաթողիկէ դաստիարակները, ինչպէս Եղբարքը, Յիսուսեանները, Սալէզեանները, եւ բոլոր ազատ դրպրոցներու կաթողիկէ աշխարհական դաստիարակները։ Իրենց դլխաւոր գաղտնիքն է՝ սիրել աշակերտները. անոնց ամէնուն ամէն բան ըլլալ. յարմարիլ, յանկուցանել, մխիթարել, օգնել, խրատել, զոհուիլ. միշտ անոնց հետ, միշտ արթուն, միշտ արագահաս. այսպէս կը դրաւեն մանուկին սիրտը, սէրը, վստահութիւնը, անոր հոգւոյն բանալին. կամաց կամաց և ամէն առթի մէջ կը կաթեցնեն անոր հոգւոյն ու սրտին մէջ կաթողիկէ սկզբունքները. և յաղթութիւնը ապահով է այլեւս։

Եւ երբ երիտասարդը արտասուալից աչքերով կը մեկնի շրջանաւարտ, հեկեկանօք քեցուելով իր սիրելի դաստիարակին դրկէն, և դեռ անփորձ՝ կը նետուի աշխարհի խօլ հոսանքին մէջ, մի՛ կարծէք որ մինակ ըլլայ ան. սիրելի դաստիարակին աչուքները հեռուէն կը հսկեն անոր վրայ. վտանգներու մէջ մատնցոյց կ'ըլլան, դժուարութեանց մէջ կը խրախուսեն, կ'առաջնորդեն ցվերջ. ա՛յս է պահպանողական դաստիարակութիւն. և այսմ կը սատարեն երիտասարդաց Ընկերութիւնք, Եղբայրակցութիւնք, Ակումբներ, ևն.։

Այսպէս կը հասցուի ու կը պտղաբերէ այդ սիրասուն պարտէզը, յորում կը բողբոջէ մարդկութիւնը՝ Կաթողիկէութեան սխրատեսիլ ծաղիկներով և միրգերով պերճ և բաղմաբեղուն։

Մաղթելի է որ մեր մէջ ալ անձնազոհ դաստիարակներ յարուցանէ Տէր, և նոր զարթօնք և վերանորոգութիւն պարգեւէ մեր սիրելի Հասարակութեան։

Վ. ԵՐՋ

ՀԻՆ ՎԱՒԵՐԱԹՈՒՂԹԵՐ

ՕՐԱԳԻՐ

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՑ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԴԷՄ

(1827 — 1830)

Բազար վէ բազար հրթեսի, թէմմուզ 1 վէ 2.— Պալատէ զիքր իտտիիմիզ տէրտէրլէր, Տէր Զաքար, Տէր Բարրիէլ վէ Տէր Բափայէլ քի Թէքիրտաղընա նէֆֆ օլունմուշլարը, պու կիւնլէրտէ չիլէլէրի թէքմիլ օլուպ իթլաքլարը չըքըը։

Ճուլաա հրթեսի Ավրաթօս 4.— Փաթրիք պաքը կէօրտիւ. քաթօլիք թայիֆէսինին բահաթ տուրաճաղը եօք. անճա էքսիլմէյօրլար ֆըրէնկ քիլիսէսինտէն, ուպուտիյէթ եէտիրիպ փապուճճու Ահմէտ պէյէ, օնու քայրէթէ քօչտու քիլիսէլէրտէն չըքանլարը չէվիրիպ թութմաղա։ Ահմէտ պէյ թէթիկ ատամ օլտուղունտան Էրմէնի ազգէսինի եէտի. վէ քէնտի պիլտիինտէն շաշմատը, լաքին սիւրէթէն իշ կէօրիւյօրում տէի ասլը եօքտան պու կիւն պիր թաքըմ տիշէկիլէրի չէվիրտի Մաթէօս էվլինին էօնիւնտէն, չիւն օ՝ մէնքալէ քօնաղը քէնտի սաթէն ալմըշ ըսը. օնտա օթուրտու, թութուլանլարընը սայըսը 10, 20 քըտար օլտու, լաքին չօղու Հալէպի թայֆէսինտէն իսկ. հէվի էնտիրթտի Ղալաթա Վօյվօտանընը քօնաղընա մահպուս տէի, պիր իքի սաաթտան սօնրա քէնտի վարտը քօնաղա վէ հուզուրունա կէթիրթտի քարըլարը. օնլարը պիրէր պիրէր այըրտա էտիպ, սալթ պիր քաչ եաչը օլանլարընը կէօնտէրտի բաթրիքհանէյէ. պունլարընը ատրասընտա պուլունտու մօնսիէօ Պաթուն ֆըրանսըզ թէրճիմանընըն հէմշիրէսի, կէրիտէ օլան կէնճ եաչտա քըզ վէ քարըլարը կէօնտէրտի էվլինէ, թէնպիհ վէ նասիհաթ իտէրէք. տէտիի տէ նէ՝. սիզ քարըլար պիր էյամ զապտ օլուն, էվլինիվտէն չըքմայըն, կիթմէյին քիլիսէյէ. իպատէթլինիվի էվլինիվտէ էտին, զիրա պէն սիզ իչուն թէքտիրիյէթ իշիտիյօրում վէ քաբու թարաֆընտան էքսիք էթմէյօրլար թէնպիհի. սինօրունտա պուլունանա էյի պագ կէօզլէ. քաթօլիք թայիֆէսինտէն Պէյօղլունա կիտիպ կիզլի էվլէրաէ ատքին օլանլարը թէքտիր էյլէ տէի. պէն չիմտիյէ քըտար քաչ նէօպէթ սիզ աղնաթտում տիյնէմէտինիզ. լաքին պունտան սօնրա սիզտէն թուրթաճագ օլուրսամ, հիչ պաքմայըպ կէօնտէրիրիմ փաթրիք, սօնունտա փիւշման օլուրսունուզ ամա, օ սիզէ ֆայտա տէիլ. պու սէօզլէրի տէտիքտէ պիր չէյ տահա պիլտիրտի վէ էօյլէ կէօնտէրտի. պիր էյամ սապր իտին, պու պէօյլէ զալմազ, եէնէ տիւզիւլիւրսիւնիւզ էվէլքի կիպի, օնլար քի բաթրիքհանէյէ կէօնտէրիլտի անիտ ժամկոչլարա թէսլիմ օլուպ կիթտիլէր Նարլըտաքի հաստալարա։

Բազար կիւն 5.— Ահմէտ պէյին կէօնտէրտիյի 5 քարըլարընը Հալէպի սահիպլէրի վարտըլար քաբուլյա վէ ըէիս էֆէնտիէ չիքաչէթ էթտիլէր բաթրիքտէն մահպուս օլան քարըլար իչին. ըէիս էֆէնտի թարաֆընտան չուհասատը կէօնտէրտի փաթրիք աղատ էթսին քարըլարը վէ պէօյլէ օնլար տա քուրթուլտուլար։ Լաքին մօսիէօ Պաթուն փաթրիքհանէյէ վարտըղընտա հէմշիրէսի իչին, կէօդիւնիւ քարայըպ աղղընը աչտը վէ լազըմը կիպի տէօչէնտի վէքիլէ պին թիւրլիւ ըէզալէթ սէօզլէր վէ թազիրլէր։

Բազար հրթեսի 6.— Բաթրիք իլք կիւնիւ սալըվէրմիշ իսի 5 քարըլարտան Շոնի սալթ պու կիւն կէրիտէ քալան 3 քարըլարը տա մէճպուր օլտու էզատ իթմէյէ. լաքին հուզուրունա կէթիրթիքտէ, ըսմարլատը. էկէր մէրամընըզ ժամա կիթմէք իսէ, նէ՝ հաճէթ ֆըրէնկ ժամընա կիթմէք, իչտէ քիլիսէմին քաբուսու աչքը տըր պուրայա կէլին. պու թէնպիհ իլէ պունլար տա վարտըլար քէնտի էվլէրինէ։

Բազար հրթեսի 13.— Բարթուղիմէոս վարթապետ կիթտի Պէյօղլունտա օլան քէնտիլէրին Երրորդութիւն ժամընա, օնտա մէշվէրէթէ տախիլ օլտու ամիրալար ըլա, քի օնլարընը իսմլէրի պու տուր. նիզամ ուսթա-

սը քէօր Արթին, չարազլը Քիրքոր ամիրա, Վարդերես տամատը Բուզկունճուքլու եաղլճը Օհաննէս աղա, պարութճու պաշը տամատը Անդրէաս աղա. պունլարտան մատա պիր քաչ իշխանլար տախիլ օլտու պու մեշվէրէթէ. չիւն օ քիլիսէնին իթթիսալինտէ քաթօլիք էվլէրի չօղուտու. մէրաք էթտիւէր հէվի օ էվլէրի քիլիսէլէրինէ վաքըֆ էթսինլէր պիր քաչընը Երրորդութիւնա, պիր քաչընը Ղալաթա Լուսաւորիչինէ վէ պիր քաչընը Բումքաբու Աստուածամոր ժամընա։ պու սէպէպէ իքթիզա օլտու տէֆա փաշա քափուսունու տօյուրմաք, զիրա 2 այտան պէրի էվ մէզաթը մէքս օլունմուշտու, իմտի պու կիւնտէն պաշլատը էվ մէզաթը հաֆիֆ բահալարլա քիլիսէ ճիվարընտա օլան էվլէրի իլքին միւսլիման իսմի իլէ աշքեար էթտիւէր վէ էլ այթընտան քէնտիլէրի քարաթարլար ուճուզ բահա իլէ օնտան սօնրա ֆէրահ եիւրէք իլէ իշէրի կիրիպ տալ սահիպի օլտուլար։

Բազար էրթեսի իկուշ 17.—Էնտէրուն պաղթաճըլարան պիրի Բէհաթիանէյէ վարաը Հալէպլի թայիֆէսինէ, վէ միւժտէլէտի օնլարը, եանի չէվքէթլիմիզ ակվ էթտի սուչունուզու պունտան սօնրա ազատսընըզ, կէօզիւնիւզիւ քալտըրըն էվլինիզէ կիտին [1]։

Թըշրընի էվվէլ, Թըշրընի սանի.— Պու իքի այըն արասընտա փաթրիք իլէ ամիրալար քայրէթտէ օլտուլար չօղ զիատէ քի Ասիթանէյտէ քալան քաթօլիքլէրին արզընը եաղըպ քաբուլա սունմազա, նիճէ եազըպ կէօստէրտիլէր իսէ, քայմագամ, իլլա սէրասքէր Եուսուֆ փաշա տիյնէմէյիպ եըրթտըլար փաթրիք արզընը վէ օնտան սօնրա հէր քաչ տէֆա բաթրիին արզը քաբուլա վարտը իսէ, տիյնէնիլմէտի, զիրա պաշլամըշտը տէվիրին տէօնմէսի, էրմէնիլէրէ քարշը կիթմէյէ, վէ քըյըլար սէչիլիյօրտու Էվրոբա տէվլէթլէրին հիւքմիւ իլէ։

Բազար կիւն, Թշրինի Սանի 4.— Սուլթան իշճիսի օլան Զէլթրուտա վէ քըզը Մարիամ, Սուլթանընն էմրի իլէ պու կիւն Պէշիքթաշտան կէօչ էտիպ Պէյ օղլունա վարըյօր արապալար իլէ. պու արապալարընն եանը սըրա Սուլթան պալթաճըսը վէ հասէքի պէրապէր կիտիյօրլար քիմսէ պունլարա մէն օլմասընլար տէի. կէօչ իտէնլէրին ճէմի 4 էվլի իսի. պիրի Զէլթրուտա ֆամիլիասը, իքինճիսի միսկճի Մկրտիչ Թաքըմը, իւչիւնճիւսիւ լիմոնճունընն տուլ էշլի, տէօրտիւնճիւսիւ սաաթճը Մինաս Թաքըմը. պունլար լազըմը իւզրէ բահաթ վարտըլար էվլէրինէ թէմէքիւն օլտուլար։

Պու տրատտա Սարտէնիա էլչիսի Մօնսիօ Մարքէզ ազիվին վասիթասը իլէ 4 մարապետլէր էղատ օլտուլար Պէյ օղլու հատտալարընտան. լաքին էթրաֆտա օլանլար էօյլէ աղնասընն քի եանի Պէղճեան ամիրանընն էմրի իլէ պունլար քուրթուլտուլար տէի. քէնտի թարաֆընտան թային էտտի Թօսուն օղլու էրկան Կարապետի քի ժուպաչըր օլուպ, օնլարը կէօթիւրսիւն Օրթաքէօյէ. վէ պունլարընն իսիմէրի մալիւմ, նիճէ պալատէ զիքր օլմուշ տուր։

(Շարունակելի)

---

[1] 17 Սեպտ. Բշ. Տէրութեան դունէն մարդ կ'երթայ Բեհանթհանէ քէօյիւն, Հալէպցիներուն տուշը միւճտէ տալով եւ ըսելով թագաւորը ձեր յանցանքը ակվ ըրաւ. գացէք Պէյ օղլու տուներնիդ նստեցէք։ Բանի մը օրէն վերջը Հալէպցոց մեծերէն կանչեցին դուռը եւ ըսին ինճիլինիդ որ է ըսել աւետարաններդ ուր կը կարթացուիր նէ առաջ կէնէ հոն գացէք այնտեղինդ իճրա ըրէք, Հալէպցիք սկսան Պէյ օղլու երթալ, երբոր հայք իմացան նէ այս բանս կրնամ ըսել որ գլխերնին վար պաղ ջուր ինչաւ մեծով պզտիկով, տես մէկ պզտիկ աղդի միաբանութիւնը այսպէս գէշ ժամանակի մէջ ինչ մեծ բան տեսան. յետոյ իմացան քի սերասքէր Խոսրէֆ Մէհմէտ փաշային եւ քանի մը տահա մեծ մարդոց ձեռքովը ըրեր էն։

Ան միջոցս մէջ կուզէին մարդ աքսորելու, բայց Աստուած չի յաջողեց։

Խալաթիայի նաչը որ քաբուճի Ահմէտ պէյն էր, տերութիւնը զասի ղաբատան բաշա ըրաւ, առաջ երկու թուղթ տուին, միջոցը քիչ անցաւ մէկ թուղթ մը տահա տուին, բայց առաջ ըսինք թէ ան մարդը լաւ մարդ է տէի Փրանքցիք որ Թերսխանային միշտ մէջը կ'աշխատին, բաշային ըրճաս ըրին ըսելով. էֆենտիմ Տէրութիւնը հալէպցոց հրաման տուաւ տեղերնին ու տուներնին երթան, մենք տէրութեան գործքին միշտ մէջը կ'աշխատինք եւ տեղերնիս տէտիրկին ըլլալուընիս ժամանակաւ գործքերնուս գլուխը չենք կրնար կոր գտնուելու, ա-

ռաջ տեղերնիս Պէյ օղլու ըլլալով մեզի շատ խօ-
լայութիւն կ'ըլլար. եւ տէրութեան բանն ալ ետ կը
մնայ կոր հեռու տեղ ըլլալնիս, ամէնքս ալ աղ-
քատ մարդիկներ ենք, ատան էֆէնտիմ, հրաման մը
ընել տուր որ տեղերնիս երթանք, եւ ժամանակաւ
ալ գործքերնուս գլուխը գտնուինք։

Բաշան կըսէ, փէք աղէկ ես ալ գիտեմ քի աղ-
քատաց երթալ գալը կիւշ կըլլայ կոր, համբերե-
ցէք քիչ մը, ժամանակը կայ։

Ամ միջոցիս մօտ օրերը թէրսխանան նաւ մը
կար ինչնալու. ըսեր էր բաշան առաջուց ան տեղը
ամէլէյից մեծերուն նայեցէք լաւ աշխատեցէք եւ
նաւը լաւ ինչնայ իրզտիէն որ արքային խօշը գայ։
ան ատեն ամ հրամանը կ'առնեմ։

Խաբտան բաշան տերասքէր Խոսրէֆ Մէհմէտ
բաշային մարդն էր, ամ թէրսխանացոց խնդիրքը
ըսեր էր անոր, ժամանակը եկաւ թագաւորը եւ
տէրութիւնը դնաց թերսխանան տեսնելու նաւին
ինչնալը, սկսան նաւը ինչեցնել, նաւին խիստ լաւ
ինչնալէն արքան փէք հաւնեցաւ, եւ աշխատողնե-
րուն պարգեւ տալով ազիրիմ ըսաւ, ու հարցուց
Խոսրէֆ բաշային, ամ աշխատող մարդիկը ինչ միլ-
լէթ են, սկսաւ սէրասքէրը ըսել, զէրէ ամ մարդը
շատ տարի խաբտան բաշայութիւն ըրած էր, լաւ
գիտէ թագաւորը քի ամէն բանէն ամ մարդը տեղ-
եակ է.

«էֆէնտիմ, պուունլարըն ճէմիսի աթատան տէ-
տէտէն թէրսանէյի ամիրէնին խըզմէթինտէ չալըշ-
մըշլար տըր, քի ին եիրմի քիմի էլլի սէնէտէն պէ-
ռու վէ հէփսիտէ պիր ճինս տիր, իշլէրինտէ գարը-
շըք եօգ տուր, վէ շիմտիէ գատար պու ճինստէն
պիր իրյանէթլիք պուհուր էթմէյիպ, տայիմ տէվ-
լէթիմիզէ սատագաթլու խըզմէթ էտուլ չալըշմըշ-
լար տըր, օնտան մատէ էֆէնտիմ պու թագըմ օլ
տէրէճէ թէրսանէյի ամիրէնին ուսուլինի ալմըշլար
տըր քի, պունլարտան դայրու, տէյէպիլիրիմ քի,
ախէրի իտարէ էտէմէզ, զիրա պունլար պուլուտա
էսքիմիշլէր։ Դալտը քի էֆէնտիմ պունլարըն պիր
էօզիւրիւ վար քի իշլէրի կէրի գալըյօր թէրսանէ-
նին»։ սէրասքէրը ամ խօսքերը ըսելովը տակէն ու-
րիշ բան պիտի հանէ, թագաւորն ալ լաւ մտիկ
կ'ընէր ասոր խօսքին, ամէն բանին տեղեակ ըլլալը
գիտնալովը։ կ'ըսէ սէրասքէրը։ «Գալտը քի էֆէն-
տիմ պու թագըմընն եէրի ուզադ օլմասը իլէ շիմտի,
իշլէրինէ վագթընտա պուլունմատքլարընտան էօ-
թիւրիւ, տէվլէթիմիզին իշի կէրի գալմասընա վէ-
սիլէ օլույօր, վէ կէլիպ կիթմէյէ ֆագիրլէր էօք
զահմէթ չէքիյօրլար։ Էվէլի եագընն եէրտէ իտիլէր,
վագթը իլէ էրքէնճէ իշլէրինէ պուլունուրլար ըսը.
լաքմընը վէ սատագաթը վէ հէփսիտէ փուքնիքլի
քաթօլիյի տիրլէր»։ Ամքան հարցուց ամ մարդիկը
առաջ ուր էին քի տեղերնին մօտ էր։ կ'ըսէ սէ-
րասքէրը Պէյ օղլու. անիտէ հրաման տուաւ թա-
գաւորը թող երթան տեղերնին նստին։

Նոյեմբ. 4 Կիրակի. Ամ օր՝ Ջօթրօթային աղջի-
կը Մարիամը հիյպէթուլլահ Սուլթանին իշճին ըլ-
լալով հրաման տուաւ ասուր Պէյ օղլու երթայ,
պալթաճի մը հետը դրաւ արապային քովէն երթայ
մինչեւ տունը քի մարդ կարող չըլլայ բան մը ը-
սելու, եւ ասոնք ամ վէսիլէյով չորս տուն որ ե-
ղան, Ջօթրաթային աղջիկը Մարիամը, մնաճի Մկըր-
տիչը, իլիմօնճիին տուլ կնիկը եւ սահաթճի Մինա-
սը, գացին Պէյ օղլու, ամ օրերուն մէջ հիւանդա-
նոցին մէջ չորս մարապետ կար խաբրը եղած, որ
վերը անուններն գրեցինք թող տուին, Նեմցէի դեսպանն
ըլճամ ըրեր էին ազատի տէյի, Պէզճեանը
ամ բանը լսելուն պէս թող տալ տուաւ։

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՄՈՒԹԻՒՆՆԵՐ

,,ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ'' ԳՐՔԷՆ

Դիրք Ա.—Գլ. ԻԴ. —Մահուան մտածուքեան վրայ։

(Շար.)

Ո՛հ, անմի՛ս, ի՞նչ կը մտածես դի՛ երկայն պիտի ապրիս, մինչդեռ եւ ոչ իսկ օրուան մը համար ապահովութիւն ունիս։

Մրչափ շատեր խաբուեցան, եւ յանակնկալս մահուան դաժնուեցան։

Բանի՛ անգամ լսեցիր պատմողներուն թէ՝ Այս ոմ սուսերով ինկաւ, միւսը խղդուեցաւ, ուրիշ մը բարձրեն իյնալով գլուխը ջախջախեցաւ, այն ոմ կերած ատեն անշնչացաւ. այլ ոմ խաղացած ատեն վախճանեցաւ։ Մեկը կրակով, միւսը սրով, ուրիշ մը ժանտախտով, մեկալը աւազակաց ձեռքը մեռաւ. եւ այսպէս ամէնուն վախճանը մահ է, եւ մարդիկներու կեանքը իրենց ատեան շուտով կ'անցնի։

ՍՈՒՐԲ ԼԵՒՈՆ ՄԱԾ, ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Սուրբ Լեւոն Տոսկանացի էր, որդի Կուինտիանոսի և սարկաւագ Հռոմի Եկեղեցւոյն։ Ինչ ինչ երկպառակութեանց առջեւը առնելու համար Ֆրանսա գանուած միջոցին, Սիքստոս Գ. Քահանայապետը վախճանեցաւ, և անոր տեղը ամէնուն միտքն հաւանութեամբ ինքը Քահանայապետ ընտրուեցաւ, որովհետեւ իր դերազանց սրբութեամբը, գիտութեամբը և խոհեմութեամբը կը գլուխ կ'անցնէր իր բոլոր ժամանակակիցները։ Ընտրութենէն յետոյ ականաւոր անձերէ կազմուած պատգամաւորութիւն մը դրկուեցաւ իրենց, որպէս զի ազատեն որ հաճի յանձն առնուլ այն պաշտօնը որուն կոչուած է Ամենաշնորհ կողմէ։ Հռոմ որ հասաւ ամէն տեսակ պատիւներով ընդունուեցաւ։ Բա-

հանդիսապետական գործերուն ձեռք զարկաւ հանգիստաւոր աղօթքներով որպէս զի Աստուած այժ կարողութիւն և շնորհք տայ արդիւնաւոր կերպով կրելու իր ուսերուն վրայ դրուած բեռը։ Յետոյ պատերազմ հրատարակեց մոլութեանց դէմ։ Եւ որովհետև այն միջոցին Մանիքեցւոց, Դոնատեանց, Արիանոսաց, Պրիսկիլիանեանց, Նեստորականաց, Պելագեանց և Կիսապելագեանց աղանդները Կաթողիկէ Եկեղեցին կը պառակտէին, փոյթ տարաւ յատկապէս անոնց դէմ կռուելու, այս մասին թուղթեր գրելով պրեւալ եպիսկոպոսներու, ի մէջ այլոց Սուրբ Պրոսպէր Ագուիտանացւոյն։

Արեւելքի հերետիկոսութիւնները մէկ հարուածով ջնջելու բուռն փափաքէն մղուած, մեծ խնամով գումարեց Քաղկեդոնի ժողովը, որուն ներկայ եղան վեց հարիւր երեսուն եպիսկոպոսներ և դատապարտեցին Եւտիքէսն ու Դիոսկորոսը և անոնց հակառակ հաստատեցին թէ Յիսուս Քրիստոս աստուածային և մարդկային երկու բնութիւն ունի, որոնք միացած են Աստուածորդւոյն անձին վրայ առանց շփոթութեան, առանց պլայլութեան իրենց իւրաքանչիւրին սեփական յատկութեանց և գործողութեանց։ Սուրբ Քահանայապետը այնքան կորովի ազդեցութիւն գործեց Մարկիանոս կայսեր և Պուլքերիա կայսրուհիին վրայ և այնքան խոհեմութեամբ ընթացաւ Եկեղեցւոյ պարիարքներուն, եպիսկոպոսներուն և բոլոր առաջնորդներուն հետ որ այս Տիեզերական ժողովը յաջողութեամբ պսակուեցաւ։ Սուրբ Լեւոն կանխաւ նամակ մը գրած էր Սուրբ Փլաբիանոսի, որուն մէջ հիանալիօրէն կը ճառէ Յաւիտենական Բանին Մարդեղութեան վրայ և կը բացատրէ ինչ որ այս մասին Կաթողիկէ հաւատքը կ'ուսուցանէ։ Այս նամակը գրելէն ետքը, Առաքելոց իշխանին, Պետրոսի, սուրբ Նշխարներուն վրայ դրաւ, չորս օր ծոմապահութիւն ըրաւ, և անոր աղաչեց որ ջնջէ կամ ուղղէ մէջը գտնուած տարակուսական բաները, որպէս զի կարենայ ապահովաբար ղրկել զայն եպիսկոպոսներուն՝ հաւատացեալոց սրբեցնելու համար։ Քառասուն օր ետքը տեսաւ որ նամակը սրբագրուած և ուղղուած է. և սուրբ Պետրոս Առաքեալը իրեն երեւնալով ըսաւ. Նամակը կարդացի եւ ուղղեցի։ Սուրբ Լեւոն կարդաց զայն և Աստուծոյ շնորհակալ ըլլալով, համարձակօրէն ղրկեց զայն Փլաբիանոսի ոչ թէ իբրեւ իր կողմէ այլ իբրեւ Առաքեալին կողմէ։ Սուրբը, իր կենդանութեան ժամանակ, տեսիլքի մէջ երեւցաւ սուրբ Եւսոգի, Աղեքսանդրիայի պատրիարքին, որ իր թուղթը պաշտպանած էր հերետիկոսներու դէմ, և անոր ըսաւ թէ եկած եմ շնորհակալութիւն մատուցանելու քեզի՝ Փլաբիանոսի գրած նամակս ըստ արժանւոյն գնահատած ըլլալուդ համար։ Այս նամակը այնքան մեծ յարգ և զօրութիւն ունեցաւ որ 630 եպիսկոպոսներէ կազմուած Տիեզերական ժողովը միաձայնութեամբ ընդունեցաւ զայն և մեծ պատիւ և գովութիւն ընծայեց անոր հեղինակին։ Ահա այս է տուման Լեւոնի ըսուած սքանչելի թուղթը, վեց հարիւր աստուածաբեալ Հայրապետներուն և Եկեղեցւոյ բոլոր աստուածաբաններուն հիացման առարկան, որ մի քանի մղեռանդ Հայերու կողմէ այնքան դժխեմ կերպով անարգուեցաւ և նոյն իսկ նզովուեցաւ իբրեւ նեստորական վարդապետութիւն պարունակող գրութիւն մը։ [1]

(Շարունակելի)

«Բիւզանդիոն»էն կ'արտատպենք հետեւեալը.

ՖՐԱՆՍԱՑԻ ՋԻՆՈՒՈՐԻ ՄԸ ՄԱՀԸ

Կ'ուզեմ պատմել ինչ որ տեսայ վերջերս։ Ո՜հ, շատ պարզ իրողութիւն մը, գրեթէ դեւհիկ, աւա՜ղ, այս օրերուս. երկիր դարձն ու մահը վիրաւորուած պզտիկ զինուորի մը։

Ամիս մը առաջ, այն քաղաքին մէջ, ուր ջրադարման կ'ընեմ, տեսեր էի մեկնումը զօրաշարժի կոտախումբին, ծաղկապսակուած, որպէս թէ հանդէսի մը համար ու տանելով քաջարի ու յաղթանդամ զինուորներ, ուրախ զուարթ, ֆրանսական այն զուարթութեամբ որ պիրենք աշխարհի առաջին զինուորները կը դարձնէ։ Եթէ արցունք մը ունէին, իրենց պարապաներուն «գտեսութիւն» ըսած աաեւնին, շուտով պիտի չորցնէին զայն. այնքան վստահ կը մեկնէին։

Նշմարեր էի մէկը, միւսներուն մէջտեղ, պզտիկ խարտիշահեր մը, աղու դէմքով, որ իր կատակախօսութիւններովը կը զուարճացնէր ընկերները։ Մայրը որ իրեն կ'ընկերանար, շատ մեծ վիշտ զգացեր էր — արդէն տարուրք էր և ունէր թափանցող ակնարկը անոնց որ շատ սառասած են — ու այդպէս կարծեցի թէ մօրը համար էր որ այնքան զուարթութիւն ցոյց կու տար զինուորը։

Կառախումբը կը սուլէր, մինչ մայրը տակաւին յուսահատօրէն կը կառչէր տղուն։ «Ո՜հ, ցտեսութիւն, մայրիկ. ըսաւ անիկա, այս անգամ քիչ մը բռնապբօսիկ զուարթութեամբ։ Պէտք է թողուս որ մեկնիմ, միթէ չըսի՞ր թէ ի՞նչ կ'ուզես որ քեզի բերեմ Պերլինէն։» — «Բու մորթդ, զաւակս», պոռաց մայրը, այնպիսի շեշտով մը որ մարդուս սիրտը կը խրշխաշացնէր։ Այս աղաղակը միաքս կը բերէի, երբ կը սպասէի այն կառախումբին որ նոյն

[1] Դիտելի է որ նոյն իսկ Էջմիածնականները տեսնելով վերջապէս իրենց այս արարքին անպատուաբեր հանդամանքը, վերցուցին մի քանի անդամներու կողմէ շարակոցին մէջ մուծուած ծանօթ երեք դժոխաշունչ տուները (Ս. Խ)։

այս զինուորները կը բերէր վիրաւոր։ Աւա՜ղ անոր մէջ ո՞րքաններ կային որ իրենց տունը կը դառնային, լոկ մեռնելու համար այնտեղ։

Որոշեալ ժամէն շատ առաջ կայարանին շրջակայքը լեցուն մարդ կար, տեղւոյն բոլոր կիները որ կ'եղբայրակցէին միւսնոյն մտահոգութեան մէջ։ Առաջին շարքին վրայ ճանչցայ զայն որ կ'ընկերանար խտրիշահեր զինուորին՝ զօրաշարժի առաջին օրը։ Շիտ չիտակ կեցեր էր, սպասումի ջերմին մէջ ձգտուած, աչուքները լափելով հորիզոնը։ Ան էր որ առաջին անգամ ըսաւ ցած ձայնով. «Ահա՛ եկան»։ Արդարեւ, կը նշմարուէր կառախումբը որ դանդաղօրէն կը յառաջանար, շնչհատ ձիու մը նման տանջուելով բարձրացած միջոցին։ Նշմարեցի թէ տակաւին իր վրայ կը կրէր մին այն ծաղկեփունջերէն, որոնցմով պճներ էին զինքը մեկնած ատենը։ Բայց հիմա այդ փունջը բոլորովին դեղներ էր ու խղճալիօրէն վար կը կախուէր։ Ցաւագին խորհրդանիշ մ'էր ասիկա։ Ժողովուրդը զայն չտեսաւ, որովհետեւ կ'ուճապարէր ընդ առաջ երթալ կառախումբին, ու երբ վերջապէս կառախումբը մտաւ կայարան՝ ահարկու ծափահարութիւն մը բարձրացաւ։ Պոռալով, արտասուելով, ծափ զարնելով, կոկորդալիր կ'աղաղակէին. «Կեցցէ՛ բանակը, կեցցէ՛ Ֆրանսա, կեցցե՛ն զինուորները»։ Ցետոյ փոթորկալից ծովու մը աղմուկը, որովհետեւ միրաւորները պատուհաններէն կախուած, կը ժպտէին ձեռքով մեզ ողջունելով։

Ցնցուած այն սարսուռէն որ շատ անգամ կ'զգացուի զէնքի կոչում եղած օրէն, բոլորովին մատնուեր էի ներքին յուզումիս, երբ յանկարծ վայրագ աղաղակ մը լսելի եղաւ. «Զաւա՛կս», ու տեսնուեցաւ կին մը որ կը խուժէր չորս հիւանդապահներու կողմէ զգուշութեամբ փոխադրուող պատգարակի մը վրայ։ Նախազգացում մը ունեցայ։ Աւա՜ղ, այո՛, մայրն էր պզտիկ զինուորին որ ճանչցեր էր զաւակը այնքան տժգոյն այս միրաւորին մէջ որ հազիւ շունչ ունէր վրան։ Պատգարակիրները մեղմութեամբ մէկկի կ'ընէին զինքը. «Զգեցէ՛ք, տիկի՛ն, 63 հիւանդանոցը կը տանինք զինքը, հոն կրնաք դալ»։ Բայց անիկա բան մը մտիկ չէր ըներ. «Ժա՛ն, զաւա՛կս»։ Վիրաւորը բացաւ աչուքները և տկար ժպիտ մը ունեցաւ զինքը ճանչնալով. «Մայրիկ» ըսաւ ու խնկաւ։ «Ա՜հ, հեծեց մայրը, ինչ վիճակի մէջ կը դարձնեն զինքն ինծի, կորսուա՜ծ է»։ Ես ինքս ալ, հիւանդապահ 63 հիւանդանոցին մէջ, վճռեցի ամէն բան ընել զինքն ազատելու համար։ Հէ՜ք պզտիկ. հիմա ամէն ժամանակէ աւելի պզտիկ աղու մը երեւոյթն ունէր, օդնութիւն աղերսող մանուկի մը աչուքներով։ «Ի՞նչ ունի» հարցուցի անոր շրթունքները թրջելով։ «Ութսնի կոր մը կիսին մէջ», պատասխանեցին ինծի, ու շուտով պիտի հասկնայի թէ այս վէրքը խիստ երկիւղալի է։ «Ա՜հ, շատ բուն եղաւ այս կռիւը» ըսաւ ինծի զինուոր մը։

... Սակայն մէկ քանի օր յետոյ ունեցայ պզտիկ վիրաւորիս համար։ Փութկոտ խնամքները, մայրը, հայրենի երկրին օդը կը թուէին զինքը վերակենդանացնել, և յետոյ, անիկա փափաք ունէր ապրելու։ Մեզի կը պատմէր պատերազմէն դրուագներ։ «Գերմանները թուզի նման կակուղ են, կ'ըսէր իր պատկերաց լեզուովը, ու բազմութեամբ եղած ատենին և իրենց սպաներուն կողմէ առաջնորդուած ժամանակնին է որ քիչ մը սիրտ ունին։ Ա՜հ, ո՞րքան կը վախնան անոնցմէ։ Շիտակն ըսելով, անոնց սպաները մերիններուն պէս չեն։ Մեր տեղակալը եղբայր մըն էր»։ Եւ կու լար առանց կեղծ ամօթխածութեան, որովհետեւ այն տեղակալը մեռեր էր ի Սէն Տիէ, և զինքն ազատել ճգնած միջոցին էր որ զինուորը վիրաւորուեր էր թշնամիին կրակին ներքեւ, ու ինքն ալ վիրաւորուած, չալկեր էր ծանրապէս վիրաւորուած իր տեղակալը, ու այսպէս շարունակեր էր վարել պզտիկ խումբին հանդնջը։ Երբ հիւանդարան մը հասեր էր, անսահման եղեր էր իր յուսահատութիւնը, տեսնելով որ տեղակալը մեռած էր։ «Բայց վերջապէս ես, կ'ըսէր, ազատեցի անոր դիակը Բրուսիացիներուն ձեռքէն»։ Այս գեղեցիկ ընթացքին համար վիրաւորն ընդուներ էր զինուորական շքադրամը, ու խնդա-

լով կ'ըսէր մօրը. «Ցեռոյ դուն գոհ պիտի ըլլաս, երբ գիւղին մէջ պատիս պատուանշան ստացած մէկու մը թեւը մտած»։ Մայրիկը կը ցնցեր գլուխը։ «Նախամեծար կը համարէի որ դուն ամբողջ դառնայիր ինծի»։

Անիկա կոիւի բաղձանքն ունէր, և ուրիշ շատերու պէս մեկնումի խօսք միայն կ'ընէր։ Ուրեմն ի՞նչ քարշողութիւն ունի պատերազմն որ հերոսութիւնը այնքան պարզ բան մը կը դարձնէ, ու մարդ ոչ իսկ մտքէ կ'անցընէ անոր համար զարմանալ։ «Ե՞րբ արդեօք պիտի դառնանք։ Սէն տիէի մէջ մեր վերեւ ունէինք գերման օդանաւերուն ռումբերը, և թնդանօթներուն ռումբերը մեր առջեւ։ Աւեր գործողը ասոնք էին, բայց մենք կանգ առած չունէինք»։ Իրեն կը հարցնէի՝ թէ ի՞նչ ազդեցութիւն կ'ընէր թնդանօթի ռումբը։ «Առաջին անգամուն, ըսաւ ինծի, սոսկալի բան է ան։ Կը սուլէ, կը սուլէ, գնդակները անոր քովը բան մը չեն. բայց մարդ չուտով կը վարժուի։ Գիտէ՞ք, ու աչուընները կը փայլէին, երբ մարդ հո՛ն է, ինքիրմէ գերազանց կ'ըլլայ. ո՛չ յոգնութիւն, ո՛չ սառապանք կը զգայ այլևս։ Բան մը միայն կ'ուզէ, յառաջ երթալ։ Ահ, վերսկսիլ»։ Աւա՜ղ։

Յանկարծակի արիւնահոսութիւն մը մեզմէ խլեց ամէն յոյս։ Ինքն ալ հասկցաւ ու քահանայ մը խնդրեց։ «Որովհետեւ, գիտե՞ս մայրիկ, ըսաւ մօրը, որուն անձկութիւնը կը տեսնէր, երբ մարդ պիտի չուէ, աւելի աղէկ կ'ըլլայ որ մաքրուած չուէ։» Ահ, այս բացատրութիւնը հոգեկան ամբողջ վիճակ մը ի վեր կը հանէր։ Մինչ ես կ'աճապարէի պզտիկ խորան մը կանգնել, հիւանդապահուհի մը կու գար քահանայով մը, և լսեցինք հոգեվարքը որ կը մրմնջէր մայրը ցոյց տալով. «Պէտք է ջանալ զինքը մխիթարել, գիտե՞ք, տէ՛ր եերէց, որ ասիկա ծանր հարուած մը պիտի ըլլայ իրեն համար։» Հերոսական այս պզտիկ հոգին արձակում ստանալէ ետքը սկսաւ Վերջին Օծումին այնքան յուզիչ արարողութիւնը։

Անգամ մը ևս զարմացած մնացի կաթողիկէ Խորհուրդներուն վեհափառ, ու եթէ կարելի է այսպէս ըսել, այդակերպող նկարագրին վրայ. որովհետեւ հոգեվարքը հերոսութենէ կը բարձրանար վսեմին ու կ'ըսէր բաներ որ զինքը ցոյց կու տային արդէն փոխադրուած վերնադաստաններ։ Այսպէս, կուրծքին օծմանը միջոցին, ըսաւ անոր դպչելով. «Հպարտ էի որ գնդապետը անոր խաչ տուաւ։ Հիմա անիկա ունի Տէրն մեր Յիսուսի Քրիստոսի Խաչը։ Աւելի աղէկ, պէտք է որ ասիկա քու մխիթարութիւնդ ըլլայ, մայրիկ։» Ինծի դառնալով ըսաւ. «Միւսներուն, որ կը վախնան, ըսէք թէ դժուար չէ մեռնիլը։» «Այո՛, ըսաւ մէկը կամացուկ մը, երբ իրեն պէս քաջ են մարդիկ։»— «Ո՛չ, յարեց անիկա, երբ մահը Աստուծոյ համար է և երկրին համար է։»

Սակայն քիչ ետքը գլուխը չփոթեցաւ, վրան զառանցանք եկաւ ու խռպոտ ձայնով մը կ'աղաղակէր. «Աջ-կողմէն, ա՜ռջ, յառա՜ջ, դպրեցուցէ՛ք կրակը»։ Այն վայրկեանին ուր քահանան հոգեվարքներուն յատուկ աղօթքներն արտասանելով կ'ըսէր՝ «Մեկնէ՛, քրիստոնեայ հոգի», կորովի վերջին ցնցում մը ունեցաւ և հանդաց. «Կեցցէ՛ Ֆրանսա, կեցցէ՛...» ու քիչ մը արիւն եկաւ շրթունքները։ Ծանցայ, նորէն ունէր ժպտուն դէմքը, գրեթէ մանկական երեւոյթով, զոր առաջ տեսեր էի։ Մեռեր էր...։

Ու մինչ մայրը կը փակէր անոր աչուընները, առանց արցունքի, որպէս թէ զաւակին հերոսական հոգին արդէն կ'անցնէր իր մէջ, քահանան զիս մէկդի առաւ։ «Էհ ուրեմն, կ'ըսէր ինծի, երբ մարդ կը տեսնէ այսպիսի վախճան մը, արդեօք անհուն վստահութիւն մը չի՞ մտներ սրտին մէջ։ Որքան ալ հիւանդ ըլլայ Ֆրանսան, տակաւին ազուոր օրեր ունի իր առջեւ, որովհետեւ այսպիսի մահեր իր փրկութիւնն են, կամ լաւ եւս՝ իր վերածնունդն են։ Ու ինձ համար ամէն բարձրացում կարելի է, ամէն յոյս ներելի է, երբ կը տեսնեմ ժողովուրդ մը որ այս ասպիճան կը կրէ չունչը ծնուցիչ ամէն յաղթանակներու. Եռանդ»։

ԲԼՕՏ ՌԻՆԵՕՆ

(Ֆիկարօ)

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ. Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ
ԿԵՆԱՑ ՄԱՍԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

(Շար. եւ վերջ)

Երբ Պիոս Ժ. Քահանայապետը յեղակարծուստ առ Աստուած կը փոխուէր, Կարդինալ Տէլլա Քիէզա Պոլոնիոյ Մայր Եկեղեցւոյն մէջ փառաւոր Հանդիսական Պաշտամունք կատարեց, ինքն անձամբ հիւսելով Մեծ Հանգուցեալին արժանեաց դրուատիքը, և փղձկելով և արտասուելով անոր քաղցր յիշատակին վրայ։ Ապա փութաց ի Հռոմ մասնակցելու Գոնդլաւիին (Պապընտիր ժողով), որով պիտի կատարուէր Քահանայապետին ընտրութիւնը՝ իբր յաջորդ Պիոս Ժ.ի, որ կարծես զոհն եղաւ ներկայ Եւրոպական ահռելի պատերազմին, որուն սոսկալի տեսարաններուն հանդիսատես ըլլալու իւր Հայրական սիրտը չհանդուրժեց։

Արդ, Ս. Եկեղեցին վարող ասուածային Նախախնամութիւնը այնպէս բերաւ՝ որ, Միրանաւոր Յակոբ Տէլլա Քիէզան իրեն Կարդինալութեան 131րդ օրը Ս. Պետրոսի Աթոռը կը բարձրանար, 1914 տարւոյ Սեպտեմբեր 3ին Բենեդիկտոս Ժե. անունով, ի յարգանս Պոլոնիոյ իրեն նախորդներէն Մի-բանաւոր Լամբերթինիի, որ Բենեդիկտոս ԺԴ. անունով քահանայապետ եղած է 1740ին, որ վերջին դարերուն ամենէն նշանաւոր և ամենէն իմաստուն քահանայապետներէ մին եղած է։

Իր ընտրութիւնը շատ նշանակալից է, եւրոպական ներկայ ահռելի պատերազմին և վերջին տարիներու միջոցին Եկեղեցւոյ հանդէպ յարուցուած այլ եւ այլ ծանր խնդիրներուն պատճառաւ։ Այսպէսով անգամ մը եւս կը հաստատուի իր բարձր տաղանդի և կարողութեան տէր ըլլալը, ինչպէս նաև ամենաընտիր եկեղեցական և ամենաբարձր դիւանագէտի համբաւը, իբր միակ Անձնաւորութիւն այս ամենափափուկ և դժուարին ժամանակին Եկեղեցին կառավարելու։

Ինքը արտաքին կազմուածքով պզտիկ, նիհար և տժգոյն է. կարծես ընդհանուր առմամբ ֆիզիքապէս տկարակազմ, բայց մեծ տաղանդի տէր, լայն ճակատ վառ և զօրաւոր սեւ աչքեր, ձայն ոչ այնքան ներդաշնակ. իր բերնէն ելած խօսք մը միշտ յայտնի կ'ըլլայ թէ նախապէս մտածուած է և իր գաղափարները այնպիսի կերպով կը յայտնէ որ մանաւոր ոյժ մը կը սատանան և լսողին մտացը մէջ կը թափանցեն եւ շատ դժուարին է որ իր խօսքերը մոռցուին։ Սահուն գաղղիերէն կը խօսի։

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ.Ի ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ։ Իր ընտրութենէն հաղիւ 24 ժամ վերջ Պետական Քարտուղար (Segretario di Stato di Sua Santità) կամ Վատիկանու Արտաքին Գործոց Պաշտօնեայ կ'անուանէ Կարդինալ Դոմինիկոս Ֆերրատան[1], որ շատ նշանակալից է, թէ՝ իբր համակրանաց ցոյց մը և թէ՝ իբր ամենախմաստուն կարգադրութիւն մը, որով Վատիկանեան քաղաքականութիւնը կը յանձնուի ամենահմուտ և ամենափորձառու անձի մը ձեռքը։ Քահանայապետը և իր Քարտուղարը, Վատիկանու երկու ամենամեծ փորձառուներ, քաղաքականութեան և դիւանագիտութեան, կարծես այս կերպով կ'ուզեն ճակատ կանգնել վերջին տարիներու ընթացքին մէջտեղ եղած քաղաքական շատ մը դժուարութեանց։

Կարդինալ տէլլա Վոլբէն իր Բամբերինկի պաշտօնին մէջ կը հաստատէ։

Մօնս. Ռանուծզի տէ Պիանքին Առաքելական պալատանց հրամանատարը և Մօնս. Սանտ տի Սամբերը սենեկապետ կ'անուանէ։

Մարքիզ Սերլուբին Աստուածաբանութեան և Մօնս. Սելին ողորմաբաշխի պաշտօնեներուն մէջ կը հաստատէ։

Բրինչիպէ Մօնս. Կալլին կոնդակաց դիւանին քարտուղար, Մաէսթրո բրինչիպէ Ռուսբոլին հիւրանոցի պետ, Մօնս. Ամասէլլան լատին նամակաց քարտուղար և մարքիզ Կղեմէս Սաքքէթտին ուսեստեղինաց պետ կ'անուանէ, իսկ Մօնս. Միկոնէն իր անձնական քարտուղարութեան, որ արդէն ժա-

[1] Կարդ. Ֆէրրատայի վրայ մեր գրած հակիրճ ծանօթութիւնները տե՛ս «Արձագանգ» թիւ 167, էջ 638։ Աւա՜ղ որ յանկարծ վախճանեցաւ։

Ծ. Խ.

մանակէ մը ի վեր իր քով այդ պաշտօնը կը վարէր։

Պիոս Ժ.ի ազգականներէն Գեր. Յովհաննէս Բարոլինը, Թրէվիզոյի ժողովրդապետը, Ս. Պետրոս մայր եկեղեցւոյ կանոնիկոս կ'անուանէ, և փոխանակ հանգուցեալ Պիոս Ժ.ի փափաքանաց հաւաձայն, սնոր երկու քոյրերուն ամսական 150ական ֆրանքի, 1000 ֆրանք թոշակ կապել կը հրամայէ։

Սեպտեմբեր 6ին ըստ իր փափաքանաց, թաղադրութեան չքեղ հանդէսը Վատիկանու Սիսդինեան մատրան մէջ կատարուելէն անմիջապէս վերջը, իր Ողորմաբաշխին Մօնս. Սելիին միջոցաւ 100,000 ֆրանքի գումար մը ևս Հռոմայ ժողովրդապետութեանց աղքատներուն բաշխել կը անօրինէ։

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.— Պոլոնիոյ արքեպիսկոպոս եղած ատենը. շատ լաւ կերպով հասկցուցած էր թէ չէր սիրեր Իտալիոյ ապագայի հակումները և իր մէջ ամենամեծ ոյժ մը ցուցուցած էր քրիստոնէական հոգւոյ յառաջադիմութեան և պահպանմանը համար. կառավարական պաշտօնեաներու հետ ո և է հակառակութիւն չէ ունեցած, այլ մանաւանդ թէ անոնց յարգանքին արժանացած է։

Իտալական լրագիրները իր դովեստը կ'ընեն իբր միակ ընտրելի ներկայ դժուարին ժամանակներու և իբր ամենաբարձր դիւանագէտ ու եկեղեցական անձնաւորութիւն մը։

ԱՐՏԱՔԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.—Ինչպէս ամէնուն ծանօթ է, միշտ բարեկամ եղած է Գաղղիոյ, նման Ռամբուլլայի. այսու հանդերձ լաւ գնահատած է միջին Եւրոպայի տէրութեանց հետ բարեկամութեան առաւելութիւնները և օգտակարութիւնը. և յիրաւի Ս. Աթոռոյ քով գտնուող ամբողջ դիւանագիտական մարմինը ժամանաւոր յարգանք մը և պատիւ մը կ'ընծայեն իրեն, որոնցմէ ոմանց հետ անձնական բարեկամութիւններ ևս ունի, ինչպէս նաև շատ մը տէրութեանց մեծամեծ դիւանագիտական մարմիններուն և նոյն իսկ այլ և այլ արքունեաց մօտ ունեցած զինքը կը ճանչնան ի հնուց. կարծես չկայ ոչ մէկ եկեղեցական որ իրմէն լաւ ճանչնայ աշխարհական բոլիթիքան. իր բարձր տաղանդը, առաքինութիւնները և փորձառութիւնը ամէնուն այն վստահութիւնը կը ներշնչեն թէ ինքը ամէնուն հետ պիտի վարուի ամենաբարձր ուղղութեամբ և բարութեամբ։

Գերման և Սպանիական կառավարութիւնք զինքը կը ճանչնան և կը յարգեն Գարոլինեան խնդրոյն լաւ կարդադրութենէն ի վեր, եւ իր մասին մեծ գովեստով կը խօսին գրեթէ ամէն տէրութեանց լրագիրք։

Աստուած ամենաբարին երկար ու երջանիկ օրեր պարգեւէ սիրելեալ մեծ Քահանայապետին, ի բարօրութիւն իւր ընդհանրական հօտին, ի բարգաւաճանս Ս. Եկեղեցւոյ և ի խաղաղութիւն և յերջանկութիւն համօրէն աշխարհի։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԿԱԹՈՂԻԿԷ ԻՇԽԱՆՆԵՐ։— Բոլոր լրագիրները մանրամասնօրէն պատմեցին Սէրայէվոյի արհաւրոտ աղէտը։ Հոս կ'ուզենք մի քանի տողով յիշատակել ինչ ինչ անցքեր որ ի վեր կը հանեն քրիստոնէական բարձր առաքինութիւնը նոյն աղէտին զոհ գացող Արհիդուքսին և անոր ընտանիքին։

Այո՛, անոնք խորապէս քրիստոնեայ էին։ Ֆրանց-Ֆէրտինանտ իր հաւատքը չէր ծածկեր, և կրօնքը կ'իշխէր իր և իրեններուն կեանքին վրայ։ Իր կրօնական անխախուտ համոզումներուն բացայայտ հաւաստիքները կու տար հասարակութեամբ աղօթելով, պատարագ տեսնելով և ստէպ հաղորդուելով։ Սովորութիւն ունէր ամէն ամսու առաջին ուրբաթ օրը հաղորդուելու։ Սուրբ-Սրտին տօնը որ այս տարի Յունիս 19ին, մահափորձէն ինը օր առաջ, կը կատարուէր, իր բարեպաշտութիւնը ցոյց տալու բարեպատեհ առիթ մը եղաւ։

Արհիդուքսը, ամուսինը, զաւակները, Քոնոբիչի Դղեակին մարդիկը, ամէնքը Սուրբ Սեղանին մօտեցան ժամը 8ին մատուցուած

պատարագին ժամանակ, և ապա գոհութեան համար երկրորդ պատարագ մըն ալ տեսան։ Նոյն օրը, կէսօրէն առաջ, ամբողջ ընտանիքը գնաց Բոնորիչի դարաստանին մէջ գրտնուող փոքրիկ մատուռը որ նուիրուած է Յիսուսի Սուրբ Սրտին. և հոն երկար ատեն աղօթեց։ Ֆրանց Ֆէրտինանտ ինչ եւ իցէ պատճառով ետ չէր կենար բնաւ ամենօրեայ աղօթքներէն, որ ամէն քրիստոնեայ սովոր է ընել։ Ամէն անգամ որ կարեւոր որոշում մը պիտի տար աղօթքի կը դիմէր։

Վիեննայէն Սէրայէվոյ Մեկնելէն անմիջապէս առաջ Արհիդուքսը իր մատուռը գնաց հոն ջերմեռանդութեամբ աղօթեց և այնքան երկար ժամանակ կեցաւ որ իր մարդիկը կը կարծէին թէ իր կառախումբը չպիտի կարենայ որոշեալ ժամուն մեկնիլ։

Տարակոյս չկայ որ այսպիսի օրինակներու շնորհիւ, Արհիդուքսին զաւակները բարեպաշտական կեանքի մը ընտելացած են։

Բոնորիչ գտնուող բարձրատիճան եկեղեցական մը Գահաժառանգ Արհիդուքսին Պոսնա մեկնելու նախընթաց օրը տեսաւ որ Սոֆի իշխանուհին հօրը մօտեցաւ և ըսաւ.

«Սիրելի՛ հայրիկ, մինչեւ քու դարձդ, կ՚ուզեմ ամէն օր պատարագի ատեն հաղորդուիլ և քեզի համար աղօթել»։ Արհիդուքսը զորովանքէն խորապէս յուզուած, դարձաւ դէպի եկեղեցականը և գոչեց. «Հիմայ լիովին խելամուտ կ՚ըլլամ Պիոս Ժ. Բահանայապետին իմաստութեան, որ յանձնարարեց մանկութեան յաճախ հաղորդութիւնը»։

Անցած տարի փոքրիկ Մաքս իշխանը, սուրբ ուրբաթ օրը, կերակուրի ատեն, աղանդերին ձեռք չզարկաւ. երբ հայրը պատճառը հարցուց այս մահացուցման, որ Եկեղեցւոյ ուրէք օրէնքով հրամայուած չէ. «Բայց, պատասխանեց տղան, կը բաղձամ ապաշխարանք ընել, մեր Տիրոջ չարչարանքին համար։» Արհիդուքսը, ոչ միայն չժպտեցաւ և ուրէք ստիպում չբրաւ, այլ գաղտրիկ յուզմամբ ողջագուրեց զանիկա և յանձնարարեց անոր որ Յիսուսի Քրիստոսի համար միշտ միեւնոյն սէրը պահէ սրտին մէջ։

Ահա նկատառութեան արժանի օրինակներ, որոնց բաղձալի է որ հետեւին ոչ միայն անոնք որ գահերու ատիճաններուն վրայ կը գտնուին, այլ ամէնքը առ հասարակ։

ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ։—Երջանկութեան գաղտնիքն է՝ իրմէ թշուառին նայիլ։

Jord Բիրոյ

Երջանկութիւնն է՝ մեր կարողութեանց համեմատ վիճակ մը ստանալ։

Մ. տր Սպայլ

Երջանկութիւնը գունդ մըն է, որուն եւ տեւէն կը վազենք երբ կը գլորի, և զորոտքով յառաջ կը քշենք երբ կանգ կ՚առնու։

Մ. տր Ռիւասիէ

Երջանիկ ըլլալու համար քսանամեայն ի՞նչ պէտք է։— Յոյսի նշոյլ մը։

Քառասնամեայն։ — Փառքի ճառագայթ մը։

Վաթսնամեայն։—Արեւու շող մը։

Ս.ս. տ'Օնարրաք

Եւ Սիրլէն Կռավէց կ՚ըսէ.

«Երջանիկ ըլլալու համար պէտք է իրմէ վար նայիլ և ոչ թէ վեր։

«Շատ մարդիկ կը համարին թէ երջանկութիւնը կը կայանայ այն բարիքներուն մէջ զորոնք ուրիշները ունին և որոնց վրայ կը նախանձին, և իրենց ունեցածները վայելելու չեն նայիր։ Իրենց կեանքին ներհակ կողմը իսկ ուրիշներուն կեանքին շիտակ կողմը միայն կը դիտեն։

«Այս վերջին ատենանը չի՞ ճշդուիր արդեօք շատ մարդոց վրայ։

«Մրչափ երջանիկ պիտի ըլլային եթէ ուզենային չնայիլ ուրիշներու, եթէ ուզենային ո՛չ ըսել այն նախանձոտ հետաքրքրութեան որ իրենց ուրախութիւնը կ՚եղծանէ։

«Զարտնջե՛նք բնաւ, մը վիճակէն գո՛հ ըլլանք, և գիտնա՛նք որ երջանկութիւնը կախում չունի ոչ անձերէ ոչ իրերէ, այլ այն բանաւոր եղանակէն, որով մարդ անձերու և իրերու կը յարմարի։

«Եթէ այս ճշմարտութիւնը մտքիդ մէջ և Ատուած կեանքիդ մէջ դնես, ստուգիւ պիտի ճանչնաս երջանկութիւնը։ Զայս կը մաղթեմ քեզի բոլոր սրտանց»։

ՎԵՐՋԻՆ ԹՈՇԱԿԸ ՕԳԱՆԱՒԻՆ ՄԷՋ։— Գեր-ման բանակէն Կաթողիկէ Գերմանիա թերթին ուղղուած է հետեւեալը. «Ֆրանսայի մէջ տեղի ունեցած Բ. ճակատամարտէն յետոյ վիրաւորուած դերման երիտասարդ սպայ մը մահուան մօտենալը զգալով թախանձագին խնդրեց որ քահանայ մը կանչուի։ Նոյն վայրկենին բանակին մէջ ոեւէ կաթողիկէ քահանայ չէր գտնուեր։ Գնդապետը հրամայեց օգնականորդի մը որ երթայ երկու ժամ անդին գտնուող ամենամօտ քաղքէն քահանայ մը առնէ գայ։ Օգնականորդը իսկոյն կը մեկնի և քիչ մը վերջը կը գտնայ քահանայի մը հետ որ օդի ճամբով վերջին թոշակը կը բերէր։ Քահանան սուրբ Խորհուրդները կը մատակարարէ սպային և քովը կը կենայ մինչեւ անոր վերջին շունչը. և ապա, դարձեալ սաւառնակով, կը գտնայ իր ժողովրդապետական եկեղեցին։

ԽԱՂԱԽԻՆ ԶԻՆ։— Բեղրոկրատէն Բիւթերի հեռագիր մը հետաքրքրաշարժ դէպք մը կը պատմէ։ Սեպտ. երկրորդ շաբթուն մէջ Աւստրիացիք Կալիցիոյ մէջ շատ լաւ մարզուած Խազախի ձի մը բռներ էին։ Աւստրիան սպայակոյտի պաշտօնական մը իրեն համար վար դրաւ այս ձին, բայց հեծնելէն ետքը, ճամբան կորսնցուց։ Ձին չիտակ տարաւ գինք ռուսական գիծերուն կողմը, ուր Խազախները վազեցին եկան, և աւստրիացի սպան դերի բռնեցին։ Իր վրայէն այնպիսի պաշտօնագրեր եղան, որոնցմէ Ռուսերը կարեւոր տեղեկութիւններ ստացան։

ՏԻԿԻՆ ԲՈՒՏԱՇԵՍԱ, ռուս ծանօթ որսորդուհին, որ քաջ է նաև մարմնամարզի մէջ, իր խնդրանքով բանակին մէջ ծառայելու արտօնուած ըլլալով, ձին և զինուորական հագուստներն ալ ինք բերած, և յառաջապահներու մէջ դիրք բռնած է ի Կալիցիա։

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ։— Սեպտեմբեր 25ին Սրբազան Քահանայապետը հանդիսաւոր ունկնդրութեան ընդունեցաւ Վսեմ. Պարոն Օթօն տէ Ռիթէր տէ Կրէօնշթայն, Սուրբ Աթոռին մօտ Պավիէրայի արտաքոյ կարգի պատուիրակը եւ լիազօր պաշտօնեան։

Ն. Վ. Տէրութիւնը Զուիցերական Պահակազունդին ուղղեցութեամբ անցաւ Քահանայապետական ապարանքին սրահներէն, եւ Գահասրահին մէջ ընդունուեցաւ Ն. Ս. Բենեդիկտոս ԺԵ.ի կողմէ, որուն մատուց իր նոր վկայագրերը մի քանի քաղաքավարական խօսքերով։ Ս. Հայրը իր գոհութիւնը յայտնեց։ Ապա հրաւիրեց Ն. Վ. Տէրութիւնը իր առանձին սենեակը, ուր քիչ մը ատեն խօսակցեցան.

Ն. Վ. Տէրութիւնը տեսակցեցաւ Վսեմ. Կարդինալ Ֆէրրատայի հետ. եւ ապա այցելելով Ս. Պետրոսի գերեզմանը մեկնեցաւ։

*** Ս. Հայրը Բենեդիկտոս ԺԵ. Ս. Պետրոսի եկեղեցւոյն մէջ երջանկայիշատակ Պիոս ԺԱ.ին հոյակապ շիրիմ մը կանգնելու համար յանձնաժողով մը կազմեց, որուն անդամներն են Վատիկանի պատրիարքական մայր եկեղեցւոյն աւագերէց Վսեմ. Ռ. Մէրլի տէլ Վալ կարդինալը, կրօնաւորաց Սուրբ ԺողովՎին գահերէց Օթաւիոյ Դաճիանոյ տէ Ադէվէտոյ եւ Կայէդանոյ Պիվէդի։

*** Հռոմէն Հոկտ. 9 թիւով հեռագիր մը կը դուժէ Ս. Քահանայապետին պետական քարտուղար Վսեմ. կարդինալ Ֆէրրատայի մահը։

— Հանգուցեալ Ֆէրրատա կարդինալին տեղը անցաւ Վսեմ. կարդինալ Բէթրոյ Կասքարտի։

ՀԱՑ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ.— Սեպտ. 30ին Արհի. Պետրոս Արքեպ. Գոյունեան մասնաւոր ունկնդրութեան ընդունուեր է Ս. Քահանայապետ Բենեդիկտոս ԺԵ.է, որ հայրական սիրով խօսակցեր է իրեն հետ քառորդ ժամէ մը աւելի, եւ Ամեն. Պատրիարքին որպիսութիւնը հարցուցեր է եւ իր ողջոյններն ու օրհնութիւնը ղրկեր է անոր։ Այս առթիւ Արհի. Գոյունեան Արքեպ. Նորին Սրբութեան ներկայացուցեր է Ամեն. Պատրիարքին շնորհաւորական նամակը, զոր կարդալով Ս. Քահանայապետը՝ երբ Բենեդիկտոս ԺԴ.ի մեր հասարակութեան ըրած բարիքներուն յիշատակութեան եկեր է, հաճեր է ըսել. Բարեգուշակ է այդ. Ե՛ս ալ պիտի բնեմ։

*** Ամեն. եւ Գերերջ. Հոգեւոր Տէրը հետզհետէ եպ.ներէն լուրեր կը ստանայ թէ մէն մի վիճակի մէջ մասնաւոր հանդիսաւոր արարողութիւններ կատարուած են թէ՛ ի հանգիստ հոգւոյ երջանկայիշատակ Պիոս ԺԱ.ի, եւ թէ ի մաղթել կար

եւ զօրութիւն նոր Ս. Քահանայապետին, Բենեդիկտոս ԺԵ.։ Շատ տեղեր, ուր Լատինները եկեղեցի չունին, կաթողիկէ հիւպատոսներն ու ներկայացուցիչները ներկայ գտնուած են մեր եկեղեցեաց մէջ, եւ յետոյ իրենց յարգանքն ու ցաւակցական կամ շնորհաւորական զգացումները ներկայացուցած են մեր եպ.ներուն։

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՈՐՄԵՐ.— Հոկտ. 13ին նախարարները, վարչապետը, ինչպէս նաեւ ծերակոյտի եւ երեսփոխանական ժողովի նախագահները կայսերական Պալատ գացին եւ Սուլթանին ելլոյցէն Տօլմա-Պաղչէի պալատը փոխադրուելուն առթիւ բարեմաղթութիւններ ըրին։ Նախարարները կայսերական պալատան մէջ ճաշելէ ետք, իրենց պաշտօնատեղին դարձան։

*** Կ. Պոլսոյ կուսակալութիւնը հետեւեալը կը ծանուցանէ.— «Ներքին գործոց նախարարութեան հրամանաւ երկու ամիս եւս երկարեցաւ Սեպտ. 28ին աւարտող այն պայմանաժամը որ որոշուած էր թաքուն պահուած անձերը մարդահամարի տումարներուն մէջ արձանագրելու, ծնունդի, ամուսնութեան, մահուան եւն. արձանագրութիւնները ամբողջովին կատարելու համար։ Նոր պայմանաժամն այլ եւս նորէն պիտի չերկարի։ Հետեւաբար կը ծանուցուի թաղերու իմամներուն, ծերոց ժողովներուն եւ շահագրգռուողներուն որ որոշուած պայմանաժամին մէջ կատարել տան վերոյիշեալ գործողութիւնները։»

Պերլին, 11.— Մեծ սպայակոյտը կը հաղորդէ մեծ բանակետղէն, Հոկտ. 10ի իրիկունը. «Լոկ 12 օրուան պաշարումէ ետքը, Անվէրս ինկաւ մեր ձեռքը իր բոլոր բերդերով։»

—Անգլ. ծովային նախարարութիւնը Անվէրսի ամրոցը ծանուցանելով կ'ըսէ թէ «անգլ. ծովային 8000 զինուոր մասնակցեր են Անվէրսը պաշտպանելու գործին եւ թէ ասոնցմէ 300ը սպաններ են կռիւին մէջ, մինչ 2000ը Հոլանտա տպատտաներ եւ մնացածներն ալ Օսթէնտ հասեր են։

— Կը կարծուի թէ Գերմաններէն 40,000 հոգի մեռեր է Անվէրսի առման մէջ։ Քաղաքին պահակագունդէն փախչող պելժ եւ անգլիացի զինուորները յաջողեր են Տիւնքէրկի մէջ ցամաք ելլել եւ անմիջապէս երթալ Դաշնակիցներուն միանալ, թէեւ Պերլինէն կը հաւաստուի թէ վերջնապէս արգիլեր են Անվէրսի անգլեւպելժ զինուորներուն ֆրանսական բանակին միանալու ձեռնարկը։ Դարձեալ կը պնդուի թէ Անվէրսի մէջ յառաջ եկած վնասները այնքան ծանր չեն։ Վիլհէլմ կայսեր չորրորդ որդին Անվէրս մտնող առաջին սպաներուն մէջն էր։ Սլպէռ թագաւորը Լոնտոն ապատտաներ է թագաւորին հետ։ Անվէրսի պելժ հրամանատար Զօր. Կիզ իբր գերի տարուած է Առիէն։ Պելժ զօրավար Մաքս ալ բէօլն տարուած է։ Անվէրսի անգլեւպելժ բանակը 20,000 մեռեալ ունեցեր է, եւ Գերմաններուն ձեռքը ձգեր է 60,000 հրացան եւ ահագին քանակութեամբ ռազմանիւթ։ Անվէրսի քաղաքային պահակախումբը ղէնք չկրելուն համար գերի չէ բռնուեր։ Նահանջող անգեւպելժ բանակին եւ գերման զօրաց միջեւ կռիւներ կը մղուին Կանտի, Լօքրէսթիի, Բվաթրէխի եւ Միլոնի կողմերը։

Պերլին, Հոկտ. 13.— Պելժ բանակին մնացորդներուն վրայ յարձակում կը գործենք Օսթէնտ։ 40,000 զօրք վինաթափ եղան Հոլանտա։ Գրաւեցինք Կանտը։ Ճակատամարտ սկսաւ Վարշաւիայի շրջակայքը։

*** Հոկտ. 10ին մեռաւ Ռումանիոյ կարոլ թագաւորը, որ երկար ատենէ ի վեր կը տառապէր սրտի եւ երիկամունքի հիւանդութեամբ. վերջերս թէեւ բարւոքում մը տեսնուած էր իր վիճակին մէջ, բայց միշտ կը վախցուէր իր աղէտալի վախճանէն։

— Այս առթիւ վեհափառ Սուլթանը ցաւակցական հեռագիր մը ուղղեց Ռումանիոյ ֆէրտինանտ նոր թագաւորին եւ Լիզոպոնի թագուհիին։

*** Աւստրեւմանեան զինուորական կցորդ, Պոլիս— Հոկտ. 11 կէսօր.— Դէպ ի Սան գետը մեր յառաջխաղացումը ազատեց Բրզէմիսլը թշնամիին պաշարումէն։ Մեր զօրքը բերդաքաղաք կը մտնէ։ Ամէն ուրեք ուր Ռուսերը կը փորձէին դիմադրել, յարձակում կրեցին եւ պարտուեցան։ Իրենց փախուստին ատեն դէպ ի Սէնիավայի եւ Լէզուժաքի կիրճերը, բազմաթիւ գերիներ ինկան մեր ձեռքը։

Ընդհ. Բանակեցի

*** Սեպտ. 10ին հեռեւեալ տեղեկութիւնը կը տրուի Վառնայէն. «Երէկ առաւօտեան 4 1/2 ին Սեւ Ծովու Ռուս նաւատորմը, որ կը բաղկանար քսանըսէթը մարտանաւէ, երեւցաւ Պալչիքի ռումէն նաւահանգիստին առջեւ։ Երեք թորփիլահալածի մտան նաւահանգիստ, ուր ռուս սպայ մը մաքսատան պետին յանձնեց Ռումէն իշխանութիւններուն ուղղուած նամակ մը։ Կը կարծուի թէ նամակը գրած էր ծովակալը։ Թորփիլահալածները յետոյ հեռացան, եւ նաւատորմը երեք մասի բաժնուեցաւ։ Մէկ մասը, որ կը բաղկանար երկու զրահաւորէ, չորս թորփիլահալածէ, երկու յաձանաւէ եւ երկու ականակիր նաւէ՝ բաց ծով ելաւ. երկրորդ մասը որ կը բաղկանար ութը մարտանաւէ, խարիսխ նետեց Պալչիքի առջեւ, քաղաքէն 4—5 մղոն հեռու։ Իսկ երրորդ մասը գնաց խարիսխ նետեց Բավարնա ռումանական նաւահանգիստին առջեւ։ Ուրիշ նաւով մը վառնա եկող ճամբորդ մը կ'ըսէ թէ նաւատորմին կը հետեւէին փոխադրանաւեր, կ'երեւի թէ զօրքով լեցուած։

*** Ռուս Մեծ Սպայակոյտը կը հաղորդէ Հոկտ. 11ին.— Կռիւներ սկսան Վիսթուլայի ձախ եզերքին վրայ, Իվանկորոտ—Վարշաւա ուղղութեամբ։ Միւս

կէտերուն վրայ կացութիւնը կը մնայ անփոփոխ։ Հեծելազօրաց ջոկատներ անցան մէկ քանի կէտերէ Բարբաթ լերան կիրճերէն եւ մտան Հունգարիոյ դաշտերը։

Ռուս. Ընդհ. Հիւպատոսարան

*** Հռոմէն Հոկտ. 13ին հեռագիր մը կ'ըսէ թէ Արտաքին գործոց նախարար Մարքիզ տի Սան Ճուլիանօ, որ ժամանակէ մը ի վեր կը տառապէր յօդատապէ, յանկարծ սրտի տագնապ ունեցեր է եւ վիճակը շատ ծանր է։ Հռոմի մէջ յուզում առաջ բերաւ այս լուրը։ Ուրիշ հեռագիր մը կ'ըսէ թէ բժիշկները ամէն յոյս կորսնցուցած են։

— Մ. Սալանտրա ստանձներ է առժամապէս վարել արտաքին գործոց նախարարութիւնը։

*** Ճօրնալէ տ'Իթալիա կ'ըսէ թէ Անգլիա բնաւ չ'ընդդիմանար որ Իտալիայ գրաւած կղզիները մնան անոր իշխանութեան ներքեւ։

Բարիզ, 12.— Գերման երկու օդանաւորդ քսան պօմպա նետեցին Բարիզի վրայ։ Երեք հոգի մեռան եւ 14 հոգի վիրաւորուեցան։ Նօթր Տամի եկեղեցին վնասուեցաւ, կ'ըսէ Ֆիկարօ։

Պերլին, 13, (Պաշտօնական).— Նաւային սպայակոյտին մէկ զեկոյցը կ'ըսէ. «Պանանի ճեւով ռուս յածանաւ մը Հոկտ. 11ին ընկղմուեցաւ թորփիլահար՝ Ֆին լանտայի ծովախորշին բացերը.»

Պեռ նաւային սպայակոյտի Պէնրէ

Բեղրօկրաս, Հոկտ. 12.— Հոկտ. 11ին, կէս օրէն ետքը ժամը 2ին, թշնամի ընդծովեանները նորէն յարձակեցան մեր Պաեան եւ Բալլատա յածանաւերուն վրայ, որոնք պահակութիւն կ'ընէին Պալթիկի մէջ։ Թէպէտ յածանաւերը ժամանակին խիստ բուռն կրակ մը բացին, բայց ընդծովեայ մը յաջողեցաւ թորփիլներ նետել Բալլատա յածանաւին դէմ, որուն վրայ պայթում յառաջ եկաւ եւ յածանաւն ընկղմեցաւ իր բոլոր մարդոցմով միասին։ (Բալլատա դրահապատ յածանաւ մ'էր, 7,900 թոնս տարողութեամբ)։

*** Հոկտ. 12ին Ռուսերուն կողմէ Շիրվինտի մօտ եղած պաշարողական փորձ մը ետ մղուեցաւ։ Այս կռիւին մէջ Ռուսերը կորսուցին 1500 գերի եւ 20 թնդանօթ։ Հարաւային Լեհաստանի մէջ ռուս յառաջապահները Վարշաւայի հարաւակողմը ետ մղուեցան։ Ռուսերուն կողմէ եղած փորձ մը Վիսթուլայէն անցնելու համար Իվանկօրօտի հարաւակողմէն, իրենց համար կորուստներով ետ մղուեցաւ։

Վերին հրամասար Աւստր. Բանակի

*** Զեկոյց Ռուս Ընդհ. Հիւպատոսարանի.— Իշխան Օլէկ, որդի Ն. Կ. Բարձրապատուութիւն Մեծ Դուքս Քոնսթանթինի, Հոկտ. 12ին (Սեպտ. 29) մեռաւ նախորդ օրուան կռիւին ատեն ստացած վէրքէն հետեւանօք։

Պերլին, Հոկտ. 13.— Իվանկօրօտի ամրոցը պաշարուած է գերման զօրքերուն կողմէ։ Սանտոմիրի մէջ տեղի ունեցած հրետանիի կռիւները նպաստաւոր են Գերմաններուն։

— Գերման Էմտէն յածանաւը բրինձ բեռցած ճաբոնական նաւեր ընկղմեց։

Պերլին, Հոկտ. 14.— Լիլ գրաւուեցաւ 4000 գերիով։

Պերլին, 14.— Բէօլնի արքեպիսկոպոսին խնդրանօք, Վիլհէլմ կայսրը հրամայեց որ գերի բռնուած ֆրանսացի այն քահանաներն որ ֆրանս. բանակին մէջ կը ծառայէին իբր պարզ զինուոր, իբր սպայ նկատուին եւ իշխանութիւնք այնպէս շարժին ատոնց հանդէպ։

Պուքրէշ, 15 Հոկտ.— «Ռումէն գործակալութենէն».— «Այն պահուն ուր Պրքսքրն եղբայրներ Մ. Կէօճի տղուն ընկերակցութեամբ օթոմոպիլով կ'երթային, Կարոլ թագաւորին յաղարկաւորութեան ներկայ ըլլալու համար, ճաշլի Հասան անուն երիտասարդ մը, որ Սելանիկէն եկած է, Սեպտ. 26ին Պոլսոյ մէջ «վիզէ» եղած անցագրով մը, ստրճանակի չորս զնդակ արձակեց Պրքսքրն եղբայրներուն վրայ, որոնցմէ մէկուն թոքը ծակեց իսկ երկրորդ եղբայրը թեթեւապէս վիրաւորեց...։ Մահափորձին հեղինակը ձերբակալուած է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	657
Հին վաւերաթուղթեր	661
Եօթնեակ Քրիստոնէի	663
Ֆրանսացի զինուորի մը մահը	664
Բենեդիկտոս ԺԵ.	667
Այլեւայլ	668
Տեղեկագրական	670

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Մ. Վ. ՔԷՐՋԻՊԱՇԵԱՆ

Տպարան Կ. Արծաղանգ Շարաթաթերթի, Բերա, Պայրամ փողոց թիւ 6, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.:—Արտասահման՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK
Péra, 5 Rue Baïram 5
Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո և է յօդուած: 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին ղրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:
Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-ատրէներ. մահազդներ, եւն. եւն.: Գիները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական ժաքութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի ունան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapeste, Budweis, Czernowitz, Drohobyez, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemysl, Salsburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:*

EN TURQUIE: *Constantinople et Smyrne.*

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scatâri.

Le Wiener Bank-Werein fait toutes opération de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;
Escompte d'effets de commerce;
Achat et vente de change sur l'Etranger;
Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;
Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;
Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;
Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;
Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;
Garde de titres, marchandises etc.
Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $^1/_2$ $^0/_0$ d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.